Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Վարչության 15.07.2022 թվականի որոշման

Գործում է 20.07.2022 թվականից

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԱՎԱՆԴԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

ԱՎԱՆԴԱՏԻՊ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ՇԱՀԱՎԵՏ»

(ֆիզիկական անձի համար)

1. **Ավանդի ներգրավման ընդհանուր պայմաններ.**
   - **Ավանդի անվանական (պարզ) տոկոսադրույքի չափը ըստ արժույթների և տոկոսների վճարման հաճախականության.**

Արժույթի տեսակը	ՀՀ դրամ				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	5.75%	-	-	-	6.00%
91-180 օր	6.75%	6.85%	-	-	7.00%
181-365 օր	8.50%	8.60%	8.70%	-	9.00%
*366-550 * օր*	9.30%	9.35%	9.40%	9.45%	9.50%
*551-730 * օր*	9.75%	9.80%	9.85%	9.95%	10.00%
*731-1095 * օր*	10.05%	10.10%	10.15%	10.20%	10.25%

Արժույթի տեսակը	ԱՄՆ դոլար				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	0.90%	-	-	-	0.95%
91-180 օր	1.50%	1.55%	-	-	1.60%
181-365 օր	3.20%	3.25%	3.30%	-	3.35%
*366-550 *օր*	4.20%	4.20%	4.20%	4.20%	4.20%
*551-730 *օր*	4.25%	4.25%	4.25%	4.25%	4.25%
*731-1095 *օր*	4.30%	4.30%	4.35%	4.35%	4.35%

Արժույթի տեսակը	ԵՎՐՈ				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	-	-	-	-
181-365 օր	1.10%	1.15%	1.20%	-	1.25%
*366-550 *օր*	2.00%	2.00%	2.00%	2.00%	2.00%
*551-730 *օր*	2.05%	2.05%	2.05%	2.05%	2.05%
*731-1095 *օր*	2.20%	2.25%	2.30%	2.35%	2.40%

Արժույթի տեսակը	ՌԴ Ռուբլի

Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	2.00%	-	-	-	2.05%
91-180 օր	3.20%	3.25%	-	-	3.30%
181-365 օր	4.30%	4.35%	4.40%	-	4.45%
*366-550 *օր*	5.20%	5.25%	5.30%	5.35%	5.40%
*551-730 *օր*	5.50%	5.55%	5.60%	5.65%	5.70%
*731-1095 *օր*	5.05%	5.05%	5.05%	5.05%	5.05%

- **Բանկ՝**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
- **Ավանդատու՝** ֆիզիկական անձ (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ),
- **Ավանդի արժույթը՝** ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ Ռուբլի,
- **Ավանդի տեսակը՝ ժամկետային՝ 31-1095 օր** (Սահմանված առավելագույն ժամկետից ավել ժամկետով ներդրման դեպքում ավանդի պայմանները կարող են սահմանվել պայմանագրային (անհատական) հիմունքներով),
- **Ավանդի ներդրման համար սահմանվող նվազագույն գումարը՝** 30.000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար, 100 Եվրո կամ 3.000 ՌԴ Ռուբլի,
- **Ավանդի ներդրման համար սահմանվող առավելագույն գումարը՝** 100.000.000 ՀՀ դրամ, 250.000 ԱՄՆ դոլար, 200.000 Եվրո կամ 5.500.000 ՌԴ Ռուբլի (Սահմանված առավելագույն գումարից ավել գումարի ներդրման դեպքում ավանդի պայմանները կարող են սահմանվել պայմանագրային (անհատական) հիմունքներով: Եթե ավանդը ներդնելու պահին Ավանդատուի և նրա հետ փոխկապակցված անձանց Բանկում գործող ավանդների հանրագումարը (ներառյալ ներդրվող ավանդը) գերազանցում է սահմանված առավելագույն գումարը՝ ներդրվող ավանդի պայմանները կարող են սահմանվել պայմանագրային (անհատական) հիմունքներով):
- **Ավանդի համալրումը՝** թույլատրվում է, առանց հաճախականության սահմանափակման, բացառությամբ ավանդի մարման ժամկետին նախորդող 30 օրը: Համալրվող գումարի չափ՝ մինչև 25.000.000 ՀՀ դրամ, 50.000 ԱՄՆ դոլար , 45.000 Եվրո կամ 3.500.000 ՌԴ Ռուբլի, ընդ որում համալրման արդյունքում ավանդի գումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման համար սահմանվող առավելագույն գումարը:
  Սույն կետը տարածվում է նաև 2018թվականի ապրիլի 16-ից հետո «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ՇԱՀԱՎԵՏ» ավանդատեսակով ներդրված մինչև 25.000.000 ՀՀ դրամ, 50.000 ԱՄՆ դոլար , 45.000 Եվրո կամ 3.500.000 ՌԴ Ռուբլի սկզբնական գումարով ավանդների վրա (նշված գումարից ավել սկզբնական գումարով ավանդների դեպքում գործում է տվյալ ավանդի համար սահմանված համալրման պայմանը):

- **Ավանդից մասնակի ելքագրումներ՝** չի թույլատրվում,
  (մասնակի ելքագրման հնարավորության բացակայության դեպքում, Ավանդատուի կողմից ավանդի գումարի մասնակի ելքագրման պահանջը բավարարելու համար, Բանկը դադարեցնում է բանկային ավանդի պայմանագիրը, Ավանդատուին տրամադրում է պահանջվող գումարը, իսկ մնացած գումարը Ավանդատուի ցանկության դեպքում ձևակերպվում է որպես նոր ավանդ՝ տվյալ պահին Բանկում գործող պայմաններով: Բանկային ավանդի պայմանագրի դադարեցման դեպքում կատարվում է տոկոսների վերահաշվարկ համաձայն սույն ամփոփագրի "Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդային գումարը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում" կետի):
- **Տոկոսների վճարման հաճախականությունը՝** ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ավանդի ժամկետի վերջում.
  - ✓ Ավանդատուի ցանկությամբ ավանդի կնքման պահին տոկոսների վճարումների ամսական տարբերակը ընտրելու դեպքում կարող է ամրագրվել տոկոսագումարի վճարման այլ կարգ՝ տոկոսագումարները կարող են յուրաքանչյուր ամիս գումարվել ավանդի գումարին, սակայն տվյալ դեպքում ավանդի կնքման պահին գործող տարեկան տոկոսադրույքը կնվազեցվի 1%-ով: Տվյալ պարագայում «ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆ» վերնագրված մասում սահմանված տոկոսադրույքները նույնպես նվազեցվում են 1%-ով:
- **Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդային գումարը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում՝ Բանկը վճարում է տոկոսներ համաձայն ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի: Եթե Բանկը Ավանդատուին վճարել է Բանկային ավանդի պայմանագրով նախատեսված տոկոսները, ապա Բանկը Ավանդատուի ավանդը ժամկետից շուտ վերադարձնելու պահանջը ստանալուց հետո վերահաշվարկ է կատարում և ավանդի գումարից պահում է Ավանդատուին վճարված տոկոսագումարները, այնուհետև՝ վերադարձնում վերահաշվարկման արդյունքում մնացած գումարը:**

* ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆ

Ավանդը 366 օր և ավել ներդնելու պարագայում Ավանդատուի պահանջով ավանդի գումարը ժամկետից շուտ ստանալու դեպքում վճարվում են հետևյալ տոկոսադրույքները՝

- ✓ **եթե ավանդը մարվում է ավանդը ներդնելու օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ, ապա վճարվում են տոկոսներ՝ համաձայն Բանկում ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքների,**
- ✓ **եթե ավանդը մարվում է ավանդը ներդնելու օրվանից 91 և ավելի օր հետո, ապա վճարվում են հետևյալ տոկոսադրույքները.**

Արժույթի տեսակը	Օրերի քանակ, տարեկան տոկոսադրույքը (%)

	91-180 օր	*181-365օր*	*366 -550*	*551օր և ավել*
ՀՀ դրամ	**6.75%**	**8.50%**	**9.30%**	**9.75%**
ԱՄՆ դոլար	**1.50%**	**3.20%**	**4.20%**	**4.25%**
Եվրո	**0.01%**	**1.10%**	**2.00%**	**2.05%**
ՌԴ Ռուբլի	**3.20%**	**4.30%**	**5.20%**	**5.50%**

- **Ավանդատուներին** տրամադրվում է վարկ կամ վարկային գիծ ստանալու հնարավորություն: Վարկը կամ վարկային գիծը տրամադրվում է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ գործող **«ABB-Առաջնակարգ»** կամ **«ABB-Առաջնակարգ+»** վարկատեսակների պայմաններով:
- **Տոկոսների հաշվարկը**՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:
- Կանխիկ մուտքագրված ավանդները և դրանց դիմաց կուտակված տոկոսները տրամադրվում են առանց միջնորդավճարի՝ 0 ՀՀ դրամ:
- Անկանխիկ մուտքագրված ավանդները, որոնց ժամկետը 181 օր և ավելի է տրամադրվում են առանց միջնորդավճարի՝ 0 ՀՀ դրամ, իսկ մինչև 181 օր ժամկետով մուտքագրված և ժամկետից շուտ պահանջվող ավանդները տրամադրվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Հաշվից քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման, հաշվի պահպանման և այլ սակագները սահմանվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Ավանդատուի ցանկությամբ անվճար տրամադրվում է **«MasterCard»** կամ **«VISA»** վճարային համակարգի հետևյալ վճարային քարտը (այսուհետ՝ Քարտ).
  - ✓ մինչև 10.000.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ավանդի մնացորդի դեպքում՝ MC Standard կամ VISA Classic վճարային Քարտ,
  - ✓ 10.000.001 ՀՀ դրամ և ավել կամ դրան համարժեք արտարժույթով ավանդի մնացորդի դեպքում՝ MC Gold կամ VISA Gold վճարային Քարտ*,
  - ✓ նվազագույնը 25 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ավանդի մնացորդի դեպքում՝ տրամադրվում է Visa Platinum վճարային Քարտ*՝ 50 % զեղչված տարեկան սպասարկման վճարով.
  - ✓ նվազագույնը 50 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ավանդի մնացորդի դեպքում՝ Visa Platinum կամ MC Platinum տեսակի վճարային Քարտ*.

  **Ավանդատուի ցանկության դեպքում սահմանված քարտատեսակի փոխարեն կարող է տրամադրվել տվյալ քարտատեսակի դասից ավելի ցածր դասի Քարտ՝ անվճար: Մեկ ավանդի շրջանակներում տրամադրվում է մեկ հատ անվճար քարտ, նույն Ավանդատուի անունով Բանկում մեկից ավելի ավանդ ներդնելու դեպքում, կարող է տրամադրվել առավելագույնը 2 հատ անվճար քարտ, ընդ որում քարտերը պետք է լինեն տարբեր արժույթներով:*
  Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին ավանդի շրջանակներում քարտ չի տրամադրվում:

Քարտը տրամադրվում է անվճար՝ առանց սպասարկման վճարի և հաշվի չնվազող մնացորդի՝ Քարտի գործողության ժամկետի ընթացքում: Քարտը տրամադրվում է ավանդային պայմանագրի գործողության ժամանակահատվածում թվով մեկ հատ: Քարտի սպասարկման այլ պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
Քարտի վերաթողարկում՝

- Քարտի ժամկետը լրանալու դեպքում Ավանդի գործողության ժամկետում՝ անվճար (սպասարկման վճարը և հաշվի չնվազող մնացորդը՝ 0 ՀՀ դրամ), քարտի սպասարկման այլ պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների,
- Ավանդի ժամկետը լրացած լինելու դեպքում, կամ քարտի վնասման կամ կորստի և (կամ) PIN կոդի գողության կամ կորստի դեպքում ՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:
- Եթե քարտը տրամադրվել է վերաթողարկման պահին փակված ավանդի հիման վրա, բայց վերաթողարկման պահին հաճախորդի անունով գործում է այլ ավանդ և եթե քարտի դասը համապատասխանում է գործող ավանդի մնացորդին, ապա թույլատրվում է վերաթողարկել քարտը անվճար (սպասարկման վճարը և հաշվի չնվազող մնացորդը՝ 0 ՀՀ դրամ):

Ավանդի գործողության ժամկետում հաճախորդի կողմից քարտի փակման դիմում ներկայացված լինելու դեպքում նոր քարտի տրամադրումը իրականացվում է համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:

Եթե Ավանդատուն դիմում է Քարտի ստացման կամ քարտի ժամկետը լրանալու դեպքում վերաթողարկման համար ավանդային պայմանագրի գործողության ժամանակահատվածում և եթե Բանկում տվյալ պահին չի թողարկվում սույն կետով սահմանված քարտատեսակը/ները, ապա Քարտի տեսակը որոշվում է տվյալ պահին Բանկում գործող ժամկետային ավանդների համար նախատեսված պայմանների համաձայն:

2. **Այլ պայմաններ և սահմանափակումներ.**

- **Ավանդատուն իրավունք ունի ավանդը ներդնել հոգուտ երրորդ անձի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:**
- Եթե ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն գրավոր հավաստում է, որ ավանդային պայմանագիրը կնքելու պահին գիտակցել ու ընդունել է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր ռիսկերը:
- Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից ներառյալ:
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել ավանդի գումարը և համապատասխան

տոկոսագումարները (ընդ որում հավելագրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները չեն վճարվում, եթե ավանդատուն մարման ժամկետից շուտ է պահանջում ավանդի գումարը, տոկոսագումարները վճարվում են համաձայն սույն ամփոփագրի 1-ին մասում նշված պայմանների):

- Բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով:
- Այն դեպքում, երբ Ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը և հաշվարկված տոկոսագումարները, ապա Բանկը ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցում է ավանդատուի ցպահանջ հաշվին: Ավանդատուի ցպահանջ հաշվին փոխանցված գումարների նկատմամբ հավելագրվում են տոկոսներ՝տվյալ պահին Բանկում գործող ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսների չափը, եթե այլ բան նախատեսված չէ բանկային ավանդի պայմանագրով: Բանկի կողմից ցպահանջ ավանդների համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է մինչև ավանդատուին տոկոսները նվազեցնելու մասին հաղորդումը ներդրված ավանդների նկատմամբ՝ համապատասխան հաղորդման օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- Բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը Ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է այն:
- Ավանդը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:
- Պայմանագրի իր օրինակը կորցնելու, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնականացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար, ընդ որում՝ Ավանդատուն պատասխանատվություն է կրում հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Եթե ավանդի մարման կամ ավանդի ժամկետի երկարաձգման օրը համընկնում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվա հետ, ապա ավանդի մարումը կամ ավանդի ժամկետի երկարաձգումը կատարվում է ոչ աշխատանքային կամ հանգստյան օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային կամ հանգստյան օրերի համար վճարելով տոկոսներ:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
- «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել ՀՀ դրամով, ինչպես նաև այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ- ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԱՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**

3. Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝

- Ավանդային պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր **է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն** ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

4. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ տասնվեց միլիոն հայկական դրամով.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

5. Տարեկան տոկոսային եկամտաբերություն

Արժույթի տեսակը	ՀՀ դրամ				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	5.90%	-	-	-	6.00%
91-180 օր	6.96%	7.03%	-	-	7.00%
181-365 օր	8.84%	8.88%	8.89%	-	9.00%
*366-550 * օր*	9.71%	9.68%	9.62%	9.45%	9.50%
*551-730 * օր*	10.20%	10.17%	10.09%	9.95%	10.00%
*731-1095 * օր*	10.53%	10.49%	10.41%	10.20%	10.25%

Արժույթի տեսակը	ԱՄՆ դոլար				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	0.90%	-	-	-	0.95%
91-180 օր	1.51%	1.56%	-	-	1.60%
181-365 օր	3.25%	3.29%	3.33%	-	3.35%
*366-550 *օր*	4.28%	4.27%	4.24%	4.20%	4.20%
*551-730 *օր*	4.33%	4.32%	4.30%	4.25%	4.25%
*731-1095 *օր*	4.39%	4.37%	4.40%	4.35%	4.35%

Արժույթի տեսակը	ԵՎՐՈ				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	-	-	-	-	-
91-180 օր	-	-	-	-	-
181-365 օր	1.11%	1.15%	1.20%	-	1.25%
*366-550 *օր*	2.02%	2.02%	2.01%	2.00%	2.00%
*551-730 *օր*	2.07%	2.07%	2.06%	2.05%	2.05%
*731-1095 *օր*	2.22%	2.27%	2.31%	2.35%	2.40%

Արժույթի տեսակը	ՌԴ Ռուբլի				
Ավանդի ներդրման ժամկետը (օրերով)	Տարեկան տոկոսադրույքը (%) ըստ տոկոսների վճարման հաճախականության				
	Ամսական	Եռամսյակային	Կիսամյակային	Տարեկան	Ժամկետի վերջում
31-90 օր	2.02%	-	-	-	2.05%
91-180 օր	3.25%	3.29%	-	-	3.30%
181-365 օր	4.39%	4.42%	4.45%	-	4.45%
*366-550 *օր*	5.33%	5.35%	5.37%	5.35%	5.40%
*551-730 *օր*	5.64%	5.67%	5.68%	5.65%	5.70%
*731-1095 *օր*	5.17%	5.15%	5.11%	5.05%	5.05%

6. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՊԱՐԶ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

- **Տարեկան պարզ տոկոսադրույք՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:**
  Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝
  ԱԳ * S/365*Օր , որտեղ՝

  ԱԳ - Ներդրված ավանդի գումար,
  S - Տարեկան պարզ տոկոսադրույք,
  Օր - ավանդի ներդրման օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետը, համաձայն որի Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
  Օրինակ՝
  Ավանդի ներդրման օրերի քանակ – 365 օր,
  Ներդրված ավանդի գումար – 100.000 ՀՀ դրամ,
  Տարեկան պարզ տոկոսադրույք – 8.50%

  100.000 * 0.085/365*364 = 8476.71 ՀՀ դրամ

- **Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) ցույց է տալիս , թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու /կապիտալացման/ արդյունքում:**
  $APY = (1+r/n)^n - 1$, որտեղ՝
  APY – տարեկան տոկոսային եկամտաբերություն,
  r – տարեկան պարզ տոկոսադրույք,
  n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է,
  Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ամենամսյա է ՝ n=12, ապա
  $APY = (1+0.085/12)^{12} -1$,
  APY = 0.884*100= 8.84%
  Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է ՝ n=1, ապա
  $APY = (1+0.085/1)^{1} -1$,
  APY = 0.085*100= 8.50 %

  Օրինակ՝
  Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով տոկոսների հաշվարկման բանաձև՝ տոկոսների ամենամսյա կապիտալացման կիրառման դեպքում՝
  Ավանդի ներդրման օրերի քանակ – 365 օր,
  Ներդրված ավանդի գումար – 100.000 ՀՀ դրամ,
  Տարեկան տոկոսային եկամտաբերություն – 8.84%

  100.000 *8.84% / 365*364 = 8815.78 ՀՀ դրամ

7. **Այլ տեղեկություններ,** Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: